

ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍԻ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

(Շար․ եւ վերջ)

Մանրամկարմնք. — Մինասի գեղարուեստական նկարների մէջ առանձնաշատուկ տեղ են դրաւում նաեւ սենեակի առաստաղի մանրանկարները, որոնք մեծ մասամբ գծանկարներ են եւ նկարուած են կապոյտ երանգով: Դրանք գլխաւորապէս պատկերում են հասարակական կեանքի պանդան երեւոյթներ: Մի տեղ ճախարակ են մանոււմ. մի ուրիշ տեղ դռնաբ պատրաստում: Տեսնում էք նաեւ մէլաւորներ, աւրանկներ, այծեամներ, առաջատասնաւ, տնային անհրաժեշտ իրեղէններ՝ կարաս, կաթսայ: Ուշագրաւ է եւ այն, որ այստեղ հագուստները հայկական են: Մանրանկարների մի որոշ մասը մաշուել է եւ եղծանուել:

Մազկանկարմնք. — Աէֆէֆեան նկարչութեան հոյակապ ստեղծագործութիւններ են կենտրոնական առաստաղի ոսկեզօծ զարդանկարները եւ նրանց ներդաշնակող շուճակը եւ նուրբ ծաղկանկարները, որոնք իրենց գոյների ու գծերի կատարեալ ներդաշնակութեամբ, նուրբ հիւսուածքով եւ գեղարուեստական պարզութեամբ ծաղկանկարչական արուեստի գլուխաւոր գործերն են: Անման են գոյները — յովազարդ, կանանչ, մուգ-կարմիր, սպիտակ, կապոյտ, դեղին, որոնք իրենց հարադասութեամբ, առես, մրցում են իրար հետ: Երկու հարիւր եօթանասուն երկար տարիներ են անցել այդ ծաղկանկարների զծաղրութեան շրջանից, բայց չնայած այդ հանգամանքին, այն-

քան բնական են եւ կենդանի, որ առես տաղանդաւոր նկարիչը, Մինասը, դեռ նոր է վրձինել:

Այստեղ էլ ընդգծենք մի էական հանգամանք: Առաստաղի եւ պատերի վերելի մասերում յորինուած նկարները գեղարուեստական խոշոր արժէք են ներկայացնում. իսկ ներքեւի որմնանկարները միջակ ստեղծագործութիւններ են: Այդ երեւոյթը պիտի բացատրել չէնց նրանով, որ պատերի վերելի որմնանկարները պատկանում են Մինասի վարպետ վրձինին եւ ուր հետադաճում չի հասել մի որ եւ է նկարչի ձեռքը:

Ներքեւի որմնանկարները, որոնք իւզաների են եւ ներկայացնում են գլխաւորապէս բնութեան եւ մարդկանց տեսարաններ, խտրական նկարչութեան դրոշմ են կրում: Այնտեղ տեսնում էք արեւմտեան դէմքեր, եւրոպական զգեստներ եւ եւրոպական ոճով տնակներ: Ահա այս որմնանկարները հետագայում նկարիչ Մինասի որդու՝ Մասթէֆոսի ձեռքով ենթարկուել են վերանորոգութեան: Սակայն, արուեստագէտ հօր արուեստագէտ զաւակը, որ նոյնպէս իրեն նուիրել է նկարչութեան, չի ունեցել, զժբախտաբար, իր տաղանդաւոր հօր հմուտ վրձինը եւ նկարները վերանորոգելիս՝ նրանց զրկել է իրենց գեղարուեստական նրբութիւնից:

Սակայն, ե՞րբ է կատարուել այդ նորոգութիւնը: Այդ հանգամանքը հաստատուելու հա-

ժար ունինք մի պերճախօս վկայութիւն: Դա սենեակի դրան ճիշդ դիմաց, պատի մէջտեղում, քանդակուած Մեսրոպեան երկաթադիր ոսկեզօծ արձանադրութիւնն է, որից պարզուում է, թէ վերանորոգութիւնը կատարուել է Եան-Սիւլէյմանի եւ էլմիածնի կաթողիկոս* Յակոբ հայրապետի ժամանակաշրջանում: Ահա այդ փաստական տուեալը:

«Յամա քազաւորութեան Եան Սիւլէյմանին եւ ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնայ Յակոբ կաթողիկոսին ի ք-վին Ռձժ եւ էին (1117 + 551 = 1668) ձեռամբ մեղաւոր Մաթէ-տսին որ է որդի սրն. Մինասիս, որ մանուկ տիաւէ հանգեաւ ի Քրիստոս. որ էր ամաց ի եւ Ե-ի. մաղթեմ զձեց ռվ սիրելիք, յորժամ տեսիլն սարա դիպիք յիշել զՄաթէտսին եւ զժը-նօղան իւր եւ զպապն իւր հեգաւոցի եւ որպս-մած խաիհա (խօջա) Պետրոսն եւ ընդ իւր մեր-ձաւորն, զոր նորգեաց գոռան ցանկալի ի վայելումն որդւոց իւրոց Պետրոս ցահին: Տեա-ւըն Տէրանց տաճէ բերկրել. յարագուարն յա-ւիտեմին, որ է օրինեալ յաւիտեանս յաւիտե-նից, ամէն»:



«Քարբիէլ հրեշտակապետի անուումը»
Նոր Զուգայի Անեմափրկչեան վանքի որմնա-
նկարներից (17րդ դար):

Այս պատմական արձանադրութիւնն արժէք է ներկայացնում կրօնական տեսակէտից. ա) Վը-կայում է, որ նկարչի Մինասի որդին՝ Մատ-թէոսը եւս ունեցել է նկարչական ձիրք եւ հե-տադայում վերանորոգել է ապարանքի մաշ-



հոջա Պետրոսեց ապարանքի որմնանկարնե-
րից. — «Պատերազմը» (այնքան է եղծանուել
որ տեսնուում են միայն որոշ բեկորներ):

ուած իւղաներկ որմնանկարները. բ) նկարիչ Մինասը ծնուել է խոջա Վէլիջանեց ազգատոհ-
մի մէջ. գ) նկարչի ազգանունը, որ մինչեւ
այժմ յայտնի չէր, ինչչպէս ասացինք՝ արձանա-
դրութեան վկայութեամբ՝ պարզուում է եւ
այսուհետեւ պիտի կոչել — Վէլիջանեան:

Մի հանդամանք եւս. ներքեւի որմնադր-
կարները շատ են մաշուել, եղծանուել եւ դրտ-
նըւում են չափազանց անմխիթար դրութեան
մէջ: Դրանցից մի քանիսի ներքեւում կան հա-
յերէն մաշուած արձանադրութիւններ, որոնք
համարեա թէ չեն կարդացուում: Վերականգնել
կարողացանք միայն մէկը, ուր քանդակած է .
Թ-վին ՌձՂ ծնունդ էր Պետրոսին:

Վերջին անգամ խորանում ու թափանցում
եմ նկարչի Մինասի զեղարուեստական լաւա-
դոյն ստեղծագործութիւնների յատակը եւ այն-
տեղ տեսնում սէֆէվեան նկարչութեան գոհար-
ներ, որոնք պատիւ եւ բերում խոշոր արուես-
տագէտին: Որոք յարզանքի ու հիացումի արուես-
յաբուութեամբ էլ բաժանուում եմ սենեակից,
տաներով իմ հետ կեանքիս լաւագոյն ազրու-
մների մի յիշատակը:

*) Այստեղ ճօքագրեմք մի երեւոյթ: Սի-
ւեմն վրացեանի խմբագրած «Վեմ»ի Գ. հա-
տորում (Բ. տարի, քիւ 1, 1934, էջ 119) Պ.
Զօրայր Միրզայանը «Վարպետ Մինաս եւ իր
որմնանկարները» խորագրով մի յօդուած է ըս-



Նոր Զուգայի հոգա Պետրոսեց ապարանքի .
որմնակարներից, 17րդ դար, գործ նկարիչ Մինասի :


Ը. հոգա Սուփասեանեց ապարանքի որմնակարները

Նոր-Զուգայի գեղարուեստական արժէք
ներկայացնող պատմական որմնակարների
շարքում ուրոյն տեղ են դրաւում նաեւ Գաւ-
րէժ Թաղում, Շահ-Աբբաս Երկրորդի ժամա-
նակաշրջանից կանգուն մնացած, հոգա Սու-
փասեանեց ապարանքի նկարները, որոնք մին-
չեւ օրս էլ զեռ ուսումնասիրութեան նիւթ շեն
դառել եւ, որ աւելի ցաւալին է, ժամանակի

տօրագրել: Բնորոշ է, որ յարգելի պարունը ա-
ռանց տեսնելու հոգա Պետրոսեց ապարանքի
որմնակարները, միայն նկարիչ Սարգիս հա-
յատրեանի զծած նկարների եւ Արա Խաղորդած
տուեայների վրայ հիմնուելով, գրել է իր յօդ-
ուածը, ինչպէս այդ մասին նա յստատվանց
մեզ եւ խնդրեց, որ իրեն տանեմ ապարանքը եւ
ցոյց տամ որմնակարները: Լէնց այդ երեւոյ-
թով էլ պիտի բացատրել, որ «վէճաձու տըպ-
ուած յօդուածում կամ մի շարք աննշգույսիւն-
ներ եւ սխալ բացատրութիւններ: Այդ տեսակե-
տից էլ Պ. Միքայելեանի ուսումնասիրութիւնը
իննադատութեան չի դիմանում: Ա. Ե.

աւերումին են ենթարկուել. որմնակարներից
շատերը զոհ են զնացել մարդկային տգիտու-
թեան եւ անհասկացողութեան: Այդ տեսակե-
տից բուռնան է նշել Հէնց այն տխուր փաստը,
որ ապարանքի ժառանգներից մէկը մի պարսիկ
նազալի յանձնարարել է աւերուած նկարները
վերականգնել: Անտաղանդ նաղաշը գեղարուես-
տական խոշոր արժէք ներկայացնող որմնար-
կարներն իր կողմէ վրձինով գոհնկացրել է:
Հարադատ են մնացել միայն ամպշոյանիի ա-
մենարարձր մասերում վրձնուած նկարները,
ուր, բարեբախտաբար, չի հասել նազալի «ա-
նողոք» վրձինը:

Աւելացնեմք եւ այն, որ որմերի նկարա-
դարձման շրջանին դրուած որ եւ է տղիւր կամ
չեչատակապիղ դանկու չամար մեր կատարած
երկարատեւ սրբապատմանն անյան ապարդիւն:
Յուսահատ՝ դանակով զգուշութեամբ քերե-
ցինք դաճով ծեփած պատի ներքեւի մի որոշ
մասը եւ աճա ճառարայթեցին հայերէն եւ
անգլիերէն լեզուներով ամսուայ անունների
սակեցոծ տառեր եւ բնութիւնը ու հասարակա-
կան կեանքը պատկերող տեսարաններ, որոնք
նոյնպէս մաշուել են եւ աղաւաղուել:



Նոր Զուգայի հռչա Պետրոսենց ապարանքի գարդանկարներից, 17րդ դար, գործ նկարիչ Միմասի :

Այստեղ էլ որմնակարներն ուշադրութեամբ գիտելիս աչքի է ընկնում մի շատ պերճախօս հանդամանք: Ո՛րքան բարձր առաստաղից ցած էք նայում, այնքան էլ որմնակարների զեղարուեստական արժէքը նուազում է: Դա պիտի բացատրել հէնց այն հանգամանքով, նայում են ձեզ իրանեան արուեստի ոճերը, գրտաղանդաւոր արուեստադէտի, թերեւս նկարիչ Միմասի վրձինով, իսկ ներքեւի նկարներն աշակերտների գործեր են:

Այժմ տեսնէք այս մեծ ապարանքի պատմութիւնը: Դա Նոր-Զուգայի ամենահին տներից մէկն է եւ կառուցուած է ճարտարապետական ուրոյն ոճով եւ կամարակապ ու լայնահիստ զոնակներով: Այսօր այնտեղ բնակուած են միայն Սոջա Սուքիասեանենց շտապիկները: Այդ նահապետական տունի մասին Նոր-Զուգայի պատմութեան մէջ կարգում ենք հետեւեալ սեղմ տողերը.

«Ի Սուքիասեանց ազգատօհմէ առաջադէմ հանդիսացաւ ի Զաւայ պարոն Մարգար Սուքիասեան որ է երեւելի կալուածատէր եւ գիւղատէր Զպարայ եւ վկայեալ ոք է բոստ ազգատիրութեան մասին»:

Ահա խոշոր կալուածատէր եւ գիւղատէր Մարգար Սուքիասեանի ապարանքի պատերից նայում են ձեզ իրանեան արուեստի ոճերը. որձագրութիւններն ու գոյները, նկարներ, որոնցից մի քանիսը սէֆէվեան յիարչութեան լաւագոյն նմոյշներ են: Դրանք, մեծ մասամբ, իշխանական կեանքն ու կենցաղը ցոլացնող ջրաներկ նկարներ են, ուր տեսնում էք զեղազէմ



Շէշանագուեր եւ գեղեցկուսին»

Նոր Զուգայի իսլա Սուքիասեանենց ապարանքի որմնակարներից, 17րդ դար:



«Իշխանը»

Նոր Զուղայի կոչա Սուքիասեանեց ապարանքի որմնակարներից, 17րդ դար:

Իրանուհիներ, արտայայտիչ ու սևեորակ աչքերով, նուրբ ու նազելի հասակով: Տեսնում էր նաև իշխաններ՝ իրենց ինքնուրոյն գծերով և տարազով: Այնտեղ իւրաքանչիւր նկար իր նարութիւնն ունի և իւրաքանչիւր տեսարան՝ իր գծագրութեան հետաքրքրական համակարգու-

թիւնը:

Տանք և այդ որմնակարների սեղմ պատկերը:

Իրամուտի] մ. — Նրբակազմ, նուրբ գիւմագծով և բարակ շրթներով, շիկահեր մի չքնաղ Իրանուհի է դա, որ սպիտակ վարդի փունջը:



«Սիրունների աշխարհը»

Նոր Զուգայի խոբա Սուփասանեց ապարանքի որմնակարներից, 17րդ դար:

կանանց տերեւով դարդարուն, աջ ձեռքին բրու-
նած, նայում է խոհուն հայեացքով: Ձախ ձեռ-
քին ունի մի երկնագույն թաշկինակ: Շէկ մա-
ղերը հանդարտ իջել են ականջների ետեւից

ցած, իսկ գլխավերեւում իշխում է բացուած
կանանց վարաւորը: Նկարում իրար են ներ-
դաշնակում բաց-զեղին, կապույտ, սպիտակ եւ
կանանց գոյները:



«Իրանցի սպառուհին»

Գեղեցկուհին: Քնարական մի գեղեցիկ պատկեր է դա: Լուսնի նման կլորագլձ, արտաբայտիչ աչքերով չքնաղ Իրանուհին, նազելի հասակով, կանգնել է կանանչազարդ եւ ծառայարջը ընդարձակ դաշտում: Հազել է նա բաց մոխրագոյն մի շրջազգեստ, մէջքից թեք իջել է մի լայն կանանչ ժապատէն: Աջ ձեռքին ունի մի տերեւափունջ: Իշխում են բաց-մոխրագոյն, սրճագոյն եւ կանանչ երանդները:

Իշխանագուռը: Կանգնել է մի ոտը միւսի վրայ դրած: Մի կողմին ընկել է գետին: Հազել է սպիտակ-կանանչ մի գծաւոր տաքատ եւ ըսպիտակատուն մի նուրբ բլուղ: Ղղից մինչեւ կուրծքը զարդարում են սպիտակ-սև թանկագին զոհարեղէնները: Մէջքից կախել է մի երկար սուր, իսկ գոտուց՝ մի փոքրիկ դաշոյն: Աջ ձեռքին բռնել է գիժու փոքրիկ բաժակը, իսկ ստերի մօտ դրել գինու լայն սափորը:

Իրանցին: Կանգնել է կանանչազարդ դաշտում: Մէջքին, սրճագոյն զգեստի վրայ, կապել է սպիտակ-կանանչ երանդով մի գօտի: Աջ ձեռքին ունի մի փոքրիկ դաշադան, իսկ ձախից՝ գլխիվայր կախել է իր բունած օձը:

Պարսկուհին: Աջ ձեռքին բռնել է կանանչ տերեւներից հիւսուած մի փունջ, իսկ ձախ ձեռքը մէջքին դրած, կանգնել է կանանչ վարագոյրի մօտ: Նկարի ներքեւի մասն եղծուած է: Առհասարակ թոյլ ստեղծագործութիւն է:

Իրանցի օրհորդը: Գեղեցիկ Իրանուհին նազանի նստել է եւ իր նուրբ մասներով բռնել կանանչ տերեւով զարդարուն սպիտակ կոկոն վարդը: Նկարի վերեւի մասը մաշուել է. երևում են միայն օրհորդի արտաբայտիչ աչքերը:

Իշխանը: Կէս ժպտաղէձ եւ հանդարտ կանգնել է: Սրածայր սև բիթերը, կամար ունքերը եւ սև խոհուն աչքերն առանձին դրաշութիւն են տալիս նկարին: Հազել է կանաչատուն զգեստ: Կարմիր-կանանչ գոյները կազմում են նկարի առանցքը: Նկարը, զժբախտարար, եղծանուել է, մաշուել եւ կորցրել իր հարպատ գեղեցկութիւնը: Այստեղ էլ դեր է խաղացել նազաչի վրձինը:



«Իշխանուհին եւ գրբացը»



«Չֆնաղ Իրանուհին»

Միրունների աշխարհը: Գեղանի Իրանուհի-
ները ճոխ սեղանի առաջ նստած, երաժշտու-
թեան նուագածութեան ներքոյ, ուրախանում
են: Նրանց երազկոտ ու սևերակ աչքերի մէջ
ե՛ւ ժպիտ կայ, ե՛ւ սէր: Միրուններից մէկու
բացել է իր մարմար կուրծքը եւ երազուն աչ-
քերով ժպտում է: Գինու, Լրօժչտոյիկանն եւ
զեղեցիկների այդ աշխարհում կեանքի անցա-
ւորութիւնը եւ ոճայնութիւնն ա՛յնչան հարա-
պատրէն պատկերացուած են: Այս զեղարուես-
տական նկարը եւս մաշուել, եղծանուել եւ նա-
զաշի վրձինով զրկուել է իր նորութիւնից:
Լուսանկարուած է նկարի միայն վերի մասը:


Որտարդը: Լայնածաւալ դաշտում կանդնած

որտարդը նուագում է իր կրծքին դրած սաղը:
Կունակից կախ է տուել որոտրդական հրացա-
նը: Ոտքերի մօտ նստել է շնիկը: Իշխում են
կանանչ, մուգ կարմիր եւ կապոյտ գոյները:
Թոյլ ստեղծագործութիւն է:

Իրանցի սպասուհին: Ազգագրի կան-կենցա-
ղային մի զեղեցիկ պատկեր է իրանցի սպա-
սուհին, որ բարակ եւ երկարավիղ շիշը ձեռ-
քին կանդնել է, նազելի հասակով: Նրա համար
ունեքերը, խոշոր, սեւ արտաշայտիչ աչքերը
ստանձին դրաշուձիւն են տալիս զէմբին: Նը-
կարում սպիտակ, սրճագոյն եւ դեղին գոյները



«Արքայազունը»



«Իշխանուհին»


կազմել են մի ղեղեցիկ ներդաշնակութիւն: Նկարի բնորոշ տարալիք ձևակերպութիւնն աւելի իրական արտայայտութիւն է տուել նկարչի յղացմանը: Առհասարակ, իրանցի կանանց պատմական տարազն ուսումնասիրելու համար մի թանկագին նմուշ է որմնանկարը:

Արժնայազուներ: Արքայական պարզ աթոռի վրայ նստած արքայազուներ պտուղ է մատուցում իր սիրունուն, որ զինու. սպիտակ սափորը բռնած՝ նրբակազմ եւ նազանի հասակով կանգնել եւ սպասում է հրամանի: Արքայական ծաղկաւուն նուրբ բեհեզն առանձին երանդ է տալիս որմնանկարին: Առհասարակ, նկարն իր

ամբողջութեամբ զծուած է բանաստեղծական շնչով եւ վկայում է նկարչի հմուտ վրձինի մասին: Նկարի առնելով ժամանակաշրջանը, ումանք նկարը վերագրում են Միրասին:

Չքնաղ իշխանուհին: Գինու բաժակը նուրբ մատներով բռնած, ժպտաղէմ եւ կանացիական շնչութեամբ, իր շինար հասակով, կանգնել է իշխանուհին: Բաց կուրծքն արտայայտում է սիրոյ բանաստեղծութիւնը: Ունի ծաղկաւուն եւ նուրբ զգեստ: Սո՛հուն աչքերը, կամար ունքերը, զեղեցիկ ճակատն առանձին գրաւչութիւն են տալիս նշածն ուղեմքին: Որմնանկարը նուրբ ստեղծագործութիւն է եւ ոճից ենթացրում է, որ նկարիչ Միրասի գործն է:

Իշխանուհին եւ գրքացը: Իշխանուհին գրքացի դիմաց, փոքրիկ գրքակալի մօտ, նստած եւ վշտալիկ խոհերի մէջ խորատուգրւած, նայում է թախծոտ հայեացքով: Նա երեսը մեղմագին յենել է աջ ձեռքին, իսկ ձախ ձեռքի բխամուտը դրել է գրքակալի վրայ զետեղուած բաց դրքի տառերին: Երկչար մարդարիտները զարդարել են վիզն ու կուրծքը: Հազել է արքունական մի նուրբ եւ ծաղկանկար ղեղեցիկ զգեստ:



«Միրախարների երջանկութիւնը»




«Միրահարների երջանկութիւնը»

Իշխանուհու գիմաց նստել է զբրացը, որի դէմքին առանձին գրաւչութիւն են տալիս խոհուն աչքերն ու ձիւնի պէս սպիտակ ժօրուսը: Աջ ձեռքը դրել է ծնկին, իսկ ձախ ձեռքին երեւում է իմաստութեան դաւազանը: Հետուն իշխում է բնութեան մի նկարը:

Իշխանուհին: Հպարտ եւ վեհ կեղուածքով կանդանձ է կանանչազարդ դաշտում, սպասողական դրութեան մէջ, նայում է հեռուն: Նրկարն ունի դեղարուեստական եւ ազգազրական արժէք:


Ամառայ պէյզաժներ: Բնութեան տեսւաբանները նկարչին առանձին ոգեւորութիւն են ներշնչել եւ ահա նա ամպշողանի ցածի մասում գծել է բնութեան և հասարակական կեանքի պատկերը: Յատկապէս նկարել է իւրաքանչիւր ամառայ բնութեան գեղեցիկ տեսարանները: Այնտեղ դուք մի տեղ տեսնում էք աշխատանքից տուն վերադարձող գիւղացուն, որ զաւաղանք ձեռքին հանդարտ քայլում է: Հայել է կանաչաւուն բլուղ եւ ունի երոպական գրխարկ: Մի ուրիշ տեղ գեղջկուհին, սափորր ձեռքին, վերադառնում է աղբիւրից: Հետուն, հաստարուն ծառի տակ, նստած է մի երիտա-



Խոզա Սուբխանանեց ապարանի գարդանկարներից. 17րդ դար:

սարդ եւ զրուցում է իր բարեկամի հետ: Որմանակարների վերեւում դրուած են հաշերէն եւ անզլիերէն ոսկեօծ տաւեր, որոնք նշում են ամիսների անունները: Այդ հանդամանքը պիտի բացատրել խոջա վանաւականների շնորհաստանում կրած անզլիական աղեցուցեամբ: Այստեղ էլ որմանակարները մաշուել եւ կորցրել են իրենց հարազատութիւնն ու պարզութիւնը: Առհասարակ, բնութեան տեսարանները արտարպութեան տպաւորութիւն են թողնուած:

Ապարանքն ունի նաեւ մի երկյարկանի շինութիւն, որի մէջտեղում բազմել է քարէ մի փոքրիկ աւազան, իսկ որմերի վրայ իշխում են սէֆէյեան նկարչութեան մի քանի թանկազին մնացորդներ: Մարդկային տպաւորութիւնն այստեղ էլ գործել է իր աւերները: Որմերի սքանչելի նկարներն ու ծաղկանկարները ծեփել են սպիտակ կիրով: Փրկուել են մի քանի որմանակարներ: Ահա եւ նրանց պատկերը:



«Ամառայ պէյզաժներից»



Ս. Ասեմաիրիչեան վանք Նոր Զուգայի

Պայտատական իշխանուհին: Լուսնի նման կէս բաց է, իսկ վիզը դարձարում են երկնագոյն զեղազէմ, վեհ հասակով, հօտարտ կանդնել է մարմանդ կանանչների վրայ: Ձախ ձեռքին բրունել է մի խնձոր: Հագել է կարմիր եւ մուգ-դեղին երկար շքեղազեւս: Մարմար կուրծքը կէս բաց է, իսկ վիզը դարձարում են երկնագոյն մարդարիտներ: Ուների տակ հսկում է շնիկը: Որսորդը: Հրացանը կողքին կանդնել է կանանչազարդ գաշտում: Միջակ ստեղծագործութիւն է:



«Գարիիկէ կրեշտակի ստեղծումը»




«Հրեշտակը հովիւներին աւետում է Փրկչի ծնունդը»

Սիրահարները: Պալատական իշխանը քրնջութեամբ բռնել է ձեռքը իր սիրուհու, որ զեղեցկութեան մի տիպար է: Նկարն իր ամբողջութեամբ զծուած է բանաստեղծական խորունկ շնչով եւ անպայման արուեստի մի նուրբ արտադրութիւն է: Հաւանորէն արտասպուսթիւն է:

Սիրահարների երջանկութիւնը: Իբրեւ ոճ եւ կառուցուածք, իրենց արուեստի վեհութեամբ եւ խորութեամբ, նկարչական խոշոր արժէք են ներկայացնում պատերի ցածի մասում զծուած սէֆէվեան շրջանի զծաղրութիւն-

ները: Դրանք պատկերում են սիրահարների երջանկութիւնը: Այնտեղ տեսնում էք արեւելեան քնարերգութեան զեղեցիկ մօտիւները — ճոխ խնջօք, երաժշտութիւն, սէր, պար եւ բնութեան վեհ տեսարաններ, որոնք նկարչի վարպետ վրձինով ներդաշնակուել են եւ ստեղծել մի զեղեցիկ բանաստեղծութիւն: Գրաւիչ են բարակ եւ կամար ունքբրով նազանի կանայք: Մարմինների եւ հասակների ի՛նչ նրբութիւն, ազնուութիւն եւ ճկունութիւն կան մանաւանդ օրիորդների մէջ: Աչքերի ի՛նչ նազանի արտայայտութիւն, շրթների ի՛նչ զեղանի ժպիտ, ձեռ-



«Յիսուսի ծնունդը»

քերի եւ իրանի ի՛նչ նազելիութիւն: Վարպետ նկարիչը Վրժինի մի ամբողջական զծագրու - թեամբ պատկերացրել է արեւելեան կանանց այդ բնորոշ առանձնայատկութիւնները: Ուշադրաւ է նաեւ հարուստ զոյների սիմֆոնիան —կարմիր, մուգ-դեղին, սրճապոյն, կապոյտ, կանանչ, սեւ եւ սպիւղոծ:

Այդ աննման որմնանկարները որոնք սէ - Փէվեան նկարչութեան գլուխ-գործոցներ են, մաշուել են եւ հղծանուել: Սակայն, աւելի ցաւալին այն է, որ դանակով ծակծակել են պատերը եւ անպին նկարները զրկել իրենց չքնաղ պեղեցկութիւնից: Դա ցոյց է տալիս յաջորդ

սերնդի ապերախտ վերաբերմունքն ու ծայրա - յեզ տպիտութիւնը:

Ապարանքի որմնանկարների հետ մրցում են նաեւ զմբէթաւոր առատադէների գունապեղ եւ ոսկեղօծ ծաղկանկարներն ու դարդանկար - ները, որոնք էլչուում են իրենց նրբութեամբ եւ խորութեամբ:

Վերջին անդամ նայում եմ ՆՂրզ դարի ըս - քանչելի նկարների մնացորդներին եւ տխուր խոհերի ու ծանր տպաւորութիւնների տակ զուրս գալիս պատմական ապարանքից, որ մի ժամանակ հպարտ էր իր հույակապ արուեստով:



«Մագրի երկրագութիւնը»

Վերջաբան —

Թէ՛ Խոջա Պետրոսնոց եւ թէ՛ Խոջա Սուքի-ասեաննոց ապարանքների որմնանկարները, որտեղ սէֆէվեան արուեստն է տիրում, գերազանցօրէն ունեն աշխարհիկ շունչ եւ ոգի: Այնտեղ իշխողն իրական կեանքն է եւ արեւելեան բանաստեղծութիւնը: Այդ երկու էական գծերը ներգաշնակուել են արուեստագէտ-նկարիչների հօրը, գունագեղ երեւակայութեամբ եւ կազմել են արուեստի գերազանց շնչով տոգորուած սքանչելի նկարներ, որոնք ներգործում են ձեռք մտքի, հոգու եւ զգացումների վրայ:

Ընդգծենք եւ այն, որ որոշ որմնանկարների արուեստի մէջ նկատելի է իտալական

շունչը, իսկ ծաղկանկարներն ու զարդանկարները սէֆէվեան շրջանում ստեղծուած եւ սէֆէվեան նկարչութեան ամենահանճարեղ արուեստագէտներ՝ Մանիի, Ռըզա Աբասի, Մուզուֆարալիմիի վրձիններով զարգացման զագաթնակէտին հասած իրանեան նուրբ արուեստն է, որին հայ արուեստագէտ նկարիչ Մինասը, իր ստեղծագործութեան նոր ու հօր շնչով, զրել է նոր հունի մէջ եւ կերտել նկարչական մի նոր դպրոց:

Այնտեղ, պատերի վրայ, ժամանակի նկարիչ-արուեստագէտները ձգտել են արտայայտել ու ձևակերպել իրենց բանաստեղծական ուզին, հոգեկան ապրումները եւ ստեղծագործական տենչերն ու զգացումները: Այդ է պատ -

ԱՄԵՆԱՓՐԿՁԵԱՆ ՎԱՆՔԸ ԵՒ ՏԱՀԱՐԻ ՈՐՄԱՆԿԱՐԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ




«Յիսուսի հաւրարձումը»

ճառք, որ որմանակարների մէջ տեսնում էք ե՛ւ քնաստեղծութիւն, ե՛ւ կեանք, ե՛ւ որոշ դասփարարիտութիւն:

Նշենք եւ այն, որ սէֆէվեան շրջանի նկարչութեան մէջ կենտրոնական տեղ են զբաւում ամբողջական զծերը, որոնք հանճարեղ կերպով ներդաշնակում են գոյների բազմազան երանգաւորումներով եւ ստեղծում նկարչական սքանչելի համադրութիւն ու ներդաշնակութիւն:

Ահա այն բոլոր փաստական տուեայները, որ նկարիչ Միստսի մասին կարողացանք արխիւներից, յիշատակարաններից, արձանագրութիւններից եւ Ողջների ապարանքներում գրծուած որմանակարներից, հիւնք երկար տարիների յամառ պրպտումներով, ձեռք բերել: Այժմ ինչ էլ որ լինեն երևույթները, մի հանդամանք պարզ է, որ տաղանդաւոր արուեստագէտի հմայիչ անունը սոկեղծո՞ւ տառերով քանդակուած է Մրզ դարի սէֆէվեան շրջանի որմանակարների պատմութեան մէջ:



«Վերափոխումը»



«Ս. Հագու յայտնութիւնը»

իր ուրոյն կառուցուածքով եւ ոճով ներկայացնում է մի գեղեցիկ յուշարձան Նոր Զուղայի հայ ժողովրդի կրօնապաշտ ոգուն նրա անցեալ փառքին: Ամէն մի այցելու առանձին հիացմունքով է նայում զարերի այդ պարզ, բայց գեղեցիկ մնացորդի վրայ, ահամայակեց է առնում այդ կոթողի առաջ, խորատուրուտ անցեալի պատմութեան մէջ եւ համակում է մի շարք թաղեր յիշողութիւններով:

Այդ հուշակար շինութեան հիմքը դրում է 1605 թուին, երբ Հայերն առաջին անգամ Նոր-Զուղա են հաստատում: Նրան տալիս են Հին-Ջուղայում գոյութիւն ունեցած «Ամենափրկիչ» վանքի անունը: Սակայն, յիսուն տարի յետոյ այդ անպաճոյն եւ անշնորհ կառուցուածքը քանդելով, հասարակութեան օժանդակութեամբ եւ Դաւիթ առաջնորդի ձեռննրկչութեամբ, ինը տարւոյ ընթացքում, կառու-

ցում են նորը: Այդ հանդամանքն է վկայում ոչ միայն 1655 թուականին գնուած մի Աստուածաշնչի յիշատակարանը, այլ եւ վանքի տաճարի արեւմտեան դրան դրոշմուած հետեւեալ յախնապակեայ արձանագրութիւնը.


«Հիմնարկեցաւ Ամենափրկչի վանքս ի թիվն ՌձՎ (1655) ի քաղաւորութեան երկրորդ Շահարասին եւ կաթողիկոսութեան Տեառն Փիլիպպոսի, ի ձեռն աւրք ուխտի Առաջնորդի Դաթի վարդապետի, կամակցութեամբ եւ տրօժ Զուղայու ժողովրդոց, եւ աւարտեցաւ ՌձՎ (1664) ամի: Որքան պատարագ եւ պաշտօնք որք ՚ի սմա կատարի լիցի մասն եւ րաժիմ հարկ կենդանեաց եւ ճնջեցելոց »:

Այժմ վանքը հպարտ է իր թանգարանով եւ մատենադարանով: Սակայն, նրա պարճանքը կազմում է Մայր Տաճարը, որ կանգնած է Առաջնորդարանի եւ զանգակատան երեսների մէջ: Դա բարձրաշէն եւ գեղեցիկ դժբէթով մի փոքրիկ եկեղեցի է, որի բոլոր պատերը ներսից, ինչպէս նշել ենք, բարձրաբերձ կաթողիկէից մինչեւ երկու մէթը մնացած յատակին, ամբողջապէս զարդարուած են իւղաներկ նկարներով եւ ոսկեղօծ ծաղկանկարներով, իսկ ամբողջ եկեղեցու շուրջը, յատակից մինչեւ պատկերների ծօտ, կը տարածուի շարք մը ամենաընտիր զարդանկար յախնապակի աղիւսներու:

Ստեղծագործական այդ վեճ աշխատանքը, ինչպէս զրել էինք, իրագործուել է Նոր-Ջուղայեցի Սոֆա Աւետիքի նախերգով ու ծախքով: Դա ինքնին գեղարուեստական մի հռչակապ յուշարձան է, որն այսօր պատիւ է բերում իր ժամանակի արուեստասէր Սոֆային:

Որքան դիտում էք պատմական այդ գոնդգոյն որմնանկարները, ոսկեղօծ ծաղկանկարներն ու զարդանկարները, նոյնքան էլ զգում էք մեծութիւնը կտարարուած աշխատանքի, որի նիւթը վերցուած է հին ու նոր Կտակարանի պատմութեան էջերից: Այնտեղ որմնանկարներն առանց զրքի ձեզ ուսուցանում են Ս. Գրքի բովանդակութիւնը, քրիստոնէութեան պատմութիւնը, սկսած ստեղծագործութիւնից եւ աշտարակաւ շինութիւնից մինչեւ Քրիստոսի համբարձումը:

Բայց բովանդակութեան մասին ամբողջական եւ էլ աւելի լրիւ զաղափար տալու հա-



Ամեմափրկչեան վանքի տաճարի յախնապակեայ գարդանկարներից. 17րդ դար:

մար այստեղ սեղմ գծերով տանք ընդհանուր պատկերը:

Գեղարուեստական նուրբ ստեղծագործութիւններ են առանձնապէս դժբեթի ութը որմնակարները, որոնք ընդգծում են անշալա վարպետ նկարչի հմուտ վրձինի արժէքը: Դրանք են .-


Աստուած ստեղծում է Ազամին: Եւայի ծնունդը Ազամի կազից: Երանհ հաշակում են արգիլուած պտղից: Տերուներով ծածկում են իրենց մերկութիւնը: Արտաբաւում են զբայստից: Աբելի մանը: Ծնողներն ողբում են Աբելի վրայ: Աբելի եւ կայէնի պատարագը:

Միւս պատերի վրայ նկարուած են .-

Ա.- Գրիգոր Լուսաւորչի չարչարանքները:
Բ.- Գարրիել հրեշտակագետի աւետումը: Հրեշտակն աւետում է հովիւներին Յիսուսի ծնունդը: Յիսուսի ծնունդը: Մոզերի երկրպա.

գուքիւնը: Հերովդէս կատորել է տալիս Բեքչեհէմի մանուկներին: Միսէոն ծերունին զբրկում է Յիսուսին: Յիսուս Ս. Տաճարում: Յովհաննէս քարգլի մկրտութիւնը: Ստաճան փորձում է Յիսուսին: Հրեշտակներն երկրպագում են Յիսուսին: Այլակերպութիւնը: Յիսուս Մաղկազարդի տօնի օրը մտնում է Երուսաղէմ: Սեղանաւորները զուրս են արտաբաւում Տաճարից: Ոտնայտան: Ընթրիքը: Բռնում են Յիսուսին: Յիսուս քահանայապետի մօտ: Յիսուսին կապում են սիննի եւ ծեծում: Պիղատոսի ատնանը: Խաչելութիւնը: Յիսուսին ցած են բերում խաչից: Քաղաւուրը: Տարութիւնը: Համբարձումը: Սուրբ Հոգւոյն յայտնուելը: Աստուածամէնի վերափոխումը:

Գ.- Աբրահամ հիւրասիրում է հրեշտակներին: Յովսէփ գեղեցիկին վաճառում են: Աբրահամ Զաւարին արձակում է տնից: Մեղէրսեղէ.



Ամենափրկչեան վանքի տաճարի յախճապակեայ գարդանկարներից. 17րդ դար:

կի պատարագը: Իսրայէլացիների չարչարանքը
 Եգիպտոսում: Իսրայէլացիները դուրս են ել-
 նում Եգիպտոսից: Սոգոմոն արքայի օծումը:
 Տապանի Յարդաման գետից անցնելը: Հրեշ-
 տակները ծեծում են Բազաամի էշին: Ղովար
 Սոգոմում: Մովսէս պատգամ է բերում Ասոր-
 ծուց: Երիժովի կործանումը: Զուլածոյ հորքը:
 Եդիսէի բժշկութիւնը: Զատիկն Եգիպտոսում:
 Դաւթի փախուստը: Սոգոմոնի երկու մանուկ-
 ների դատաստանը: Մերքերի տոփումը Շուշա-
 նին: Յովսէփի Պետափրէի կնոջ հրապուրելը:
 Պղնձէ օձը: Դանիէլն առիւծների գրում: Յով-
 նանին ձգում են ծովը: Փարաւոնն անցնում է
 Կարմիր Մովից: Արքաւան ողջակէզ է անում
 Իսահակին: Մովսէս չոր է բոյսեցնում վիճից:
 Մորենին վառում է:

Դ. Աշտարակի շինութիւնը: Կործանումը:
 Յակոբի որդիների միւլաւորումը: Դանիէլի
 տեսիլը: Ստեփաննոսի բարկածումը: Նաւն իր-
 օքն եկեղեցու նշան: Զրիեղեղը: Նոյի տապակից
 իննելը:

Համարձակ վրձինի ստեղծարարութիւն է
 Վերջին Դատաստանը: Դա եկեղեցու ամենա-
 խոշոր նկարն է, բռնել է Հիւսէրային կողմի ամ-

բողջ պատը: Ներկայացնում է վերելում դրախ-
 տը, իսկ ներքեւում դժոխքը, իր աճեցի տեսա-
 րանով: Այնտեղ դուք տեսնում էք հուր, բազ-
 մազլխեսան վիշապներ, կատաղի դեւեր, սա-
 տանաներ եւայլն: Վիշապների բերանից դուրս
 են ժայթքում բոցեր, իսկ հրեշտակները վերե-
 ւից մեղաւորներին գցում են աճեցի դժոխքը:

Նոր-Ջուլայում վրձինուած ամենամեծ որմ-
 նանկարն է դա, որի նմանը չենք տեսել անգամ
 ո՛չ Բերլինի, ո՛չ Վիեննայի, ո՛չ Մոսկուայի եւ
 ո՛չ էլ Քիֆլիսի ու Երեւանի նկարչական թան-
 պարաններում:

Այժմ այստեղ ինքնին առաջ են դալիս մի
 քանի հիմնական հարցեր, — Վանքի տաճարի
 իւղաներկ պատկերներից ու ոսկեգօծ ծաղկա-
 նկարներից որո՞նք ընդօրինակութիւն են կամ
 դժուած են հետեւողութեամբ եւ ո՞ր որմնանը-
 կարներն ինքնուրոյն ստեղծագործութիւններ
 են: Ո՞ր որմնանկարները պատկանում են նկա-
 րէջ Միխայիլի եւ Յովհաննէս Տիեզերալոյս
 վարդապետներ: Վերջապէս, ովքե՞ր են միւս
 հայ ու օտար տաղանդաւոր նկարիչները: Հար-
 ցեր, որոնք, դժբախտաբար, մինչեւ օրս էլ
 մնում են մութ եւ կարօտ են լուրջ լուսարա-



Ամենափրկչեան վամբի տաճարի ռսկեգծ
ծաղկամկարներից, 17րդ դար:

նութեան: Այդ էական խնդիրներէ քննութեան կ'անդրադառնանք մի այլ պատեհութեամբ: Այժմ միայն այսքանը որոշապէս կ'արձանազրենք, որ նկարչական արուեստի ստեղծագործական այդ վեհ աշխատանքում հայ նկարիչներէց՝ իրենց հմուտ վրձինով՝ խոշոր դեր են կատարել, ինչպէս արդէն արձանագրել ենք, Յովհաննէս Տիեզերայոյս վարդապետը եւ՝ Նոր-Ջուղայեցի վարպետ Միմասը: Այս տաղանդաւոր արուեստագէտներէ շարքում առանձնապէս պիտի յիշատակել նաեւ անունը նկարիչ Տէր Ստեփաննոսի, որ իր ժամանակաշրջանում փայլել է նոյնպէս իբր հմուտ մանրանկարիչ: Նրա մասին՝ Ամենափրկչեան տաճարի բեմի հիւսիսային կամարին նկարուած Աստուածածնի պատկերի տակ, նրա աջ ոտքի մօտ, կարգում ենք սեւ եւ մանր տառերով գրուած հետեւեալ տողերը. — Կոյս ար. ռզորմես տր. Ստեփաննոս պատկերաւանիս:


Կայ մի այլ ուշադրու արձանագրութիւն. դա եկեղեցու բեմի հարաւային կամարի վրայ, ճիշդ Աստուածածնի նկարի դիմաց, Յովհաննէս Մկրտչի նկարի ներքեւում, նրա ձախ ոտքի մօտ, նոյնպէս սեւ ու մանր տառերով, գրուած հետեւեալ յիշատակարանն է. «Բամիմ Կարապետ, մախթայ վամ պատկերաւան Սի. միմիս եւ Թաքսի, քիվն ԱձԿ»: *)

Ահա փաստական այն տուեալները, որոնք շատ ազատ գաղափար են տալիս վանքի տաճարի պատերը նկարազարդող մի քանի հայ արուեստագէտ նկարիչներէ մասին: Անկասկած, ժամանակը եւ քանասիրական հետազոտութիւնները մի օր կը յայտնադործեն թէ՛ հայ եւ թէ՛ օտար բայ նկարիչներէ անունները, որոնք իրենց հմուտ վրձինով կերտել են, թայմազան երանդներէ սքանչելի ներդաշնակութեամբ, գեղարուեստական մի ուրոյն աշխարհ: Դա իր ամբողջութեամբ նկարչական մի գեղեցիկ թանգարան է, ուր որմնանկարներից շատերը, մանաւանդ հիմնական գմբէթի եւ նրա կից պատերի վերեւի պատկերները, զծուած են այնպիսի հմտութեամբ ու վարպետ վրձինով այնպիսի նրբութեամբ ու ճաշակով, որ դրաւում են իւրաքանչիւր այցելուի սիրան ու հոգին, եւ որոնք կարող են նկարչական ամէն մի լուսպոյն թանգարանի զարդը կազմել:

*) Սոյն արձանագրութիւնների մասին իր յօդուածում նշում է նաեւ Պ. Երուանդ Հայրապետեանը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ.

Մանօթ. — Մեր ուսումնասիրութիւնը պատրաստելիս օգտուել ենք հետեւեալ աղբիւրներէց. — «Ազգայրար», Երուսթիւն քահանայ



Նոր Զուգայի Ամենափրկչեան վանքի տաճարի գունագեղ գարդանկարներից, 19րդ դար :

Շժառնեանի, «Պատմութիւն Պարսից», *Խաչատուր վարդապետ Զուղայեցու*. «Իրանի պատմութիւնը», *Շարդենի*. «Պատմութիւն Նոր-Զուղայու», *Յարութիւն Տէր-Յովհաննանցի*. «Բագմավէպ», Հ. *Անդրիկեանի* յօդուածը. «Ազգասէր», *Մերոպ Թաղիադեանի*. Ամենափրկչեան վանքի տաճարի որմերի արձանագրութիւնները. Խօջա Պետրոսեմց ապարանքի որմի արձանագրութիւնը. ձեռագիր յիշատակարաններ. «Գործ», *Լէօի* յօդուածը. «Տա-

բե», *Արտաւազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեանի*. «Նոր-Զուղայ», Ա. *Երեմեանի*. «Աստուածաշունչ», *Ռսկանի*. «Ալիք», *Երուանդ Հայրապետեանի* յօդուածը: Վերջինին մէջ մեզ համար նորութիւն էր միմիայն Ռսկանի Աստուածաշունչի նկարների մասին պարզած տեսակէտը: Տաճարի մի շարք որմնանկարներն Աստուածաշունչի պատկերների հետ նորից համեմատեցինք եւ գտանք ճիշդ :

Ա. Ե